

5.ՍՈՑԻԱԼ–ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

5.8.Տնային տնտեսությունների հետազոտություններ²⁰

Ծրագրով նախատեսված տնային տնտեսությունների հետազոտությունների գծով թվով 13 վիճակագրական աշխատանքները (580001-580013 ծածկագրեր) ամբողջությամբ կատարվել են:

Համաշխարհային բանկի տեխնիկական օժանդակությամբ իրականացվող «Աղքատության մոնիթորինգ» ծրագրի շրջանակում, համաձայն պետական վիճակագրական աշխատանքների Ծրագրի, 2004թ. ապրիլի 1-ից անց է կացվել տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտություն: Մարզային կտրվածքով ներկայացուցչական տվյալներ ստանալու նպատակով տնային տնտեսությունների ընտրանքի չափը մեկ տարվա համար հասցվել է 6816-ի՝ 2003թ. 4644-ի դիմաց: Յուրաքանչյուր ամիս հետազոտվել է 568 տնային տնտեսություն: Տնային տնտեսությունների ընտրանքում ընդգրկումն իրականացվել է ամենամսյա ռոտացիայի (փոխարինման) եղանակով: Հավաքագրված տվյալների ամփոփումը եկամուտների, ծախսերի, հիմնական սննդամթերքների սպառման և այլ ցուցանիշներով կատարվել է եռամսյակային կտրվածքով: Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտության նախնական արդյունքները զետեղվել են «Պարենային ապահովություն և աղքատություն» եռամսյակային տեղեկագրի մեջ:

Վերանայվել և կատարելագործվել է «Ժամանակի օգտագործում» հետազոտության հարցաթերթն ու օրագիրը: Հարցազրուցավարների համար մշակվել է փորձնական հետազոտության անցկացման հրահանգ, ընտրանքի հաշվետվային ձև, հարցազրուցավարի մատյան, գործունեությունների ծածկագրերի տեղեկատու, ծածկագրող-օպերատորի սխալների գրանցամատյան:

2004թ. հուլիսի 1-ից մինչև 31-ը իրականացվել է «Ժամանակի օգտագործում» փորձնական ընտրանքային հետազոտություն: Ստեղծվել է տվյալների բազա: Ստացվել են ելքային աղյուսակներ և պատրաստվել է նախնական զեկույցը:

2004թ. սեպտեմբերի 15-ից հոկտեմբերի 15-ը ՀՀ առողջապահության նախարարության և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համատեղ անց է կացվել «Արգանդի վզիկի նախաքաղցկեղի/քաղցկեղի և սեռավարակների տարածվածության կլինիկահամաճարակաբանական ուսումնասիրություն»: Ստեղծվել է տվյալների բազա հետագա վերլուծության համար:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտության տվյալների հիման վրա տեղեկատվություն է պատրաստվել տարբեր վիճակագրական ժողովածուների համար:

«Աղքատության մոնիթորինգ» ծրագրի շրջանակում 2004թ. հունվար-փետրվար ամիսներին շարունակվել են աշխատանքները տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության նոր հարցաթերթի և օրագրի մշակման ուղղությամբ:

Եռամսյակը մեկ ՀՀ կառավարությանը և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացվել նվազագույն սպառողական զամբյուղի հաշվարկը՝ միջին փաստացի գներով (երկու տարբերակով):

²⁰ Տես՝ Ծրագիր, Հավելված I: